

աւելի ևս զօրացել է: Միւս կողմից արդէն մի մեծ շարք են կազմում Դելիշի դասաստուութեան գէմ՝ ուղղուած զանազան կարգի գրութիւնները՝ որը գիտնական, որը հրապարակաստական ընաւորութեամբ, — որն առանձին գրքոյիով, որն ամսաթերթերի ու օրագրերի մէջ:



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ.

Փետր. 17-ին Նորին Սրբութիւնն Վեհ. Հայրապետ Բարեհաճեց գնալ Երևան, ուր քնաց երկու օր, և վերադարձաւ:

Նորին Սրբութիւնը Հայր. Աթոռ բարձրանալու օրից առանձին կարեւորութիւն է աուել ս. Ղեոնդեանց տօնին և կամեցել է, որ Միաբանութիւնն ըստ արժանեցյն պատուելով նոցա յիշատակը՝ արծարծէ ու կենդանի պահէ իւր մէջ այդ ախար հոգեւորականների պաշտած զաղափարները: Այս անգամ ևս բարեհաճել էր պատուիրել, որ նոցա տօնի օրն ամբողջ Միաբանութիւնը վեհաբանում ծաշէ և ս. Ղեոնդեանց խորհրդաւոր յիշատակի հետ կապէ իւր բարեկենդանի ուրախութիւնը: Վեհափառ Հայրապետը հաճեց ներկայ լինել ծաշի սկզբում, և իւր խմստայից զուարճաբանութիւններով համեմաժ խօսքերն ու բարեմազթութիւնները շատ կենդանութիւն աուին ծաշկերոյթին: Նոյն օրը գրական երկոյթ կար ձեւաբանում, որին ներկայ էին նաև ոմանք միաբան Հայերից* և որ շատ աշխոյժ անցաւ ու հաճելի տպաւորութիւն թողեց: Առանձնապէս ուշադրութիւն գրաւեց մի ուսանողի կարդացած հետաքրքրական ուսումնասիրութիւնը

* Բոլոր այսպիսի հանդէսներին ամբողջ Միաբանութիւնն անխափր հրաւիրուել է միշտ:

Եսայի նշեցու զպրոցի և ունիթորական ու հակաունիթորական շարժումների մասին:

Սոփորական հանդիսաւորութեամբ կատարուեց նաև ս. Վարդանանց ասնրայ որի առթիւ պատարագից յետոյ ձեմարանում տեղի ունեցած գրական հանգէսն ևս շատ յաջող էր և մեծ գոհունակութիւն պատճառեց ներկայ եղող Միաբանութեան և մի քանի պատահական հիւրերին: Աշակերտների ճառերից ու ոտանաւորներից յետոյ խօսեց պատմութեան ուսուցիչ պ. Ստ. Կանայեան, որ պատմական փաստերով հերքել կամեցաւ Վարդանանց հերոսական գործի նկատմամբ շատերի ունեցած թիւր հասկացողութիւնները և մեծ ոգևորութեամբ շեշտեց նոցայ իրրեւ Հայ—Եկեղեցւոյ նահատակների, իսկական արժանիքը: Աւելորդ է յիշել, որ թէ այս և թէ առհասարակ ձեմարանական բոլոր հանգէսներին երգեցողութիւնն օրինակելի էր, և զնալով աւելի ու աւելի կատարելագործուում է:

Մեծ պահոց օրերի համար Միաբանութեան անդամներից քարոզիչներ են նշանակուած թէ Վաղարշապատի և թէ մօտիկ տեղերում քարոզելու համար: Առաջին կիւրակէին՝ միայն գիւղի եկեղեցւոյ քարոզեց Տ. Աշոտ վարդապետ, բայց յետոյ կարգադրուեցաւ, որ նաև Մայր Տաճարում իւրաքանչիւր կիւրակէ քարոզ լինի:

Փետր. 19-ին՝ վերադառնալով Պետերբուրգից, Մայր Աթոռ հասաւ Տ. Մեօրոս վարդապետ: Մի քանի օրով եկած էին Ադուլէաց ս. Թովմայ առաքելոյ վանահայր Տ. Սահակ վարդ. Բաղդասարեան և Զարեքայ վանահայր Տ. Վահան վարդ. Դէորդեան: Աւել մեկնեց զէպի Տփիսիս, Բ. Ը իւր պաշտօնատեղին:

Տ. Եղիշէ Ժ. վարդապետ Մուրադեան մեկնեց զէպի

Թաւրիզ, իւր հետ ունենալով Ախալքալաքի նախկին գործակալ Տ. Ընձակ վարդապետին, որ կարգուեցաւ Սալմաստի առաջն. փոխանորդ: — Իսկ Ախալքալաք ուղարկուեցաւ, Մեծ պահոց օրերում ժողովրդին քարոզելու և մխիթարելու համար՝ Տ. Մեսրոպ արեղայ Մաքսուդեան:

Տպարանի նախկին տեսուչ Տ. Մատթէոս վարդապետ կարգուեցաւ Բաղուի գործակալ և մեկնեց զէպի իւր սլաշտանատեղին:



ՏԱՃԿԱՀԱՅՔ

† Տ. Խորէն եպիսկոպոս Մխիթարեան.— Յունուար 22-ին եղեսնոյ մէջ ի տէր հանդեաւ Հայ եկեղեցականութեան պատուական և պատկառելի զէմբերէն մէկը, Տ. Խորէն եպիսկոպոս Մխիթարեան: Իրենց եկեղեցւոյն և ժողովրդեան անձնուէր հին եկեղեցականութեան վերջին ներկայացուցիչներէն մէկն էր հանդուցեալ Սրբազանը, որ իր կոչման գիտակցութեան հետ ունէր նաեւ կոչում և սէր դպրութեան և բանասիրութեան:

Տ. Խորէն եպիսկ. Մխիթարեան ծնած է 1822 յունուար 1-ին Վանայ Աւանց գիւղի մէջ. հօրը անունը՝ Մխիթար Մինասեան, և մօրը՝ Աննա Աբրահամեան: Մկրտութեան անունն էր Աբրահամ: Նախնական կրթութիւն մը առած է Աւանց գիւղի և Վանայ դպրոցներուն մէջ. յետոյ 1859-ին երուսաղէմի Ս. Յակովբեանց վանուց վարժարանին մէջ շարունակած է իր ուսումը, քերականութեան, ճարտասանութեան, տրամաբանութեան և կրօնագիտութեան դասեր առնելով Վանանդեցի Յովհաննէս վարժապետէն, և եկեղեցական երգեցողութեան՝ Պալաթցի Կարապետ վարժապետէն:

Եկեղեցական ըլլալէ առաջ ըրած է նաւաւարութիւն՝ Վանայ ծովուն վրայ, և դրադրութիւն Սաֆրաճի արհեստաւորաց՝ ի Խասդիւղ Կ. Պոլսոյ: